ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 23Ա

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՄԵՍՐՈՊ ՄԱԿՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԵՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) նախագահ Արթուր Օհանյանը Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդին ներկայացված միջնորդությամբ հայտնել է, որ՝

Դատարանում առկա է քրեական մասնագիտացում ունեցող դատավորի 4 հաստիք՝ ներառյալ Դատարանի նախագահի հաստիքը:

Դատարանի նախագահը ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25Լ որոշման համաձայն քննում է Դատարանի քրեական մասնագիտացում ունեցող մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի քանակից 25%-ով պակաս գործեր, այսինքն՝ վերջինիս հանձնվող գործերի տոկոսաչափը կազմում է 75%:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2017թ. օգոստոսի 29-ի թիվ 19Ա որոշմամբ Դատարանի քրեական մասնագիտացում ունեցող դատավոր Արտուշ Գաբրիելյանի անուն-ազգանունը սույն թվականի օգոստոսի 30-ից մինչև դեկտեմբերի 29-ը ներառյալ հանվել է գործերի բաշխման ցանկից՝ հաշվի առնելով վերջինիս վարույթում առանձնակի բարդության գործերի առկայությունը:

Դատարանի քրեական մասնագիտացում ունեցող մյուս դատավորը՝ Աննա Դանիբեկյանը, 31.08.2017թ.-ից գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում, հետևաբար, վերջինիս անունը-ազգանունը, համաձայն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 5-րդ կետի, նույնպես տվյալ պահին հանված է գործերի բաշխման ցանկից:

Ներկայումս Դատարանում քրեական մասնագիտացում ունեցող թվով 4 դատավորներից միայն դատավոր Վարդան Գրիգորյանին հանձնվող գործերի տոկոսաչափն է կազմում 100%, ինչն էականորեն ավելացնում է վերջինիս հանձնվող գործերի քանակը և լրացուցիչ անհամաչափ ծանրաբեռնվածություն է ստեղծում տվյալ դատավորի համար:

2017 թվականի ընթացքում, օգոստոսի 29-ի դրությամբ Դատարանում ստացվել և մուտքագրվել է 84 քրեական գործ՝ 139 անձի վերաբերյալ, ինչպես նաև 2016 թվականից փոխանցվել է 72 քրեական գործ՝ 134 անձի վերաբերյալ. ընդհանուր առմամբ՝ 156 քրեական գործ՝ 273 անձի վերաբերյալ:

Դատարանի վարույթում առկա են հասարակական հնչեղություն ստացած, ինչպես նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ այլ քրեական գործեր, որոնք վերաբերում են 2016թ. հուլիս ամսին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին, 2016թ. հուլիս ամսին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի վարչական շենքերն ու հարակից տարածքները զավթելու և պահելու դեպքերին, ՀՀ ԱՆ ՔՎ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում բռնության գործադրմամբ և գույքի վնասմամբ և ոչնչացմամբ զուգորդված զանգվածային անկարգություններին և այլն:

Դատարանի կողմից սպասարկվող վարչական տարածքում ՀՀ ԱՆ ՔՎ «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների առկայության հանգամանքով պայմանավորված՝ Դատարանի կողմից քննվել և այժմ Դատարանի վարույթում առկա են նշված քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև պատիժ կրող դատապարտյալների կողմից ներկայացված բազմաթիվ միջնորդություններ:

Դատարանի կողմից ստացվում են հարկադիր բուժման տեսակի փոփոխության վերաբերյալ, պատիժը փոփոխելու, հետաձգելու, պատժից ազատելու վերաբերյալ, ՀՀ ԱՆ ՔԿ վարչությունից ստացված այլ երկրների դատավճիռները ՀՀ տարածքում ճանաչելու և համապատասխանեցնելու մասին բազմաթիվ միջնորդություններ, ինչպես նաև՝ դատապարտյալների կողմից ՀՀ ԱՆ ՔՎ ՔԿՀ վարչակազմերի գործողությունների դեմ բողոքներով և անկախ հանձնաժողովի կողմից կայացված որոշումների դեմ բողոքներով բազմաթիվ դիմում-բողոքներ:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պատիժ կրող ցմահ դատապարտյալների կողմից կատարված նոր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը հիմնականում նույնպես քննվում են Դատարանի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով Դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հանգամանքը, Դատարանի նախագահը խնդրել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի աջակցությունը՝ Դատարան քրեական մասնագիտացում ունեցող դատավոր(ներ) գործուղելու հարցում:

Բացի այդ, Դատարանի նախագահը ՀՀ դատարանների նախագահների խորհրդի նախագահին 22.09.2017թ. ներկայացրած լրացուցիչ գրությամբ ևս մեկ անգամ տեղեկացնելով

ողջ վերոգրյալի մասին, հայտնել է, որ Դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանը, 22.09.2017թ.-ից կրկին գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում, որի կապակցությամբ վերջինիս անունը-ազգանունը, համաձայն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 5-րդ կետի, տվյալ պահին հանված է գործերի բաշխման ցանկից:

Հիմք ընդունելով Դատարանի նախագահի վերոգրյալ միջնորդությունները, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արտակ Թադևոսյանի և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մեսրոպ Մակյանի համաձայնությունները, նկատի ունենալով գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման և արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արտակ Թադևոսյանին և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մեսրոպ Մակյանին 2017 թվականի սեպտեմբերի 25-ից՝ վեց ամիս ժամկետով, գործուղել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 23
ք.Երևան